ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ԱՊՔ ՊԸԾՁԲ-01/01
(մասնակցության հայտի ապահովում)

ք.Ալավերդի «___» փետրվարի 2017թ.

"Պաունի ՍՊԸ"-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Կարեն Թանդիլյանի /ID 002125920, 22.06.2025, 055/, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետ՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1Ընկերությունը մասնակցում է «Ալավերդու պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ անվտանգության ծառայությունների ձեռքբերման ԱՊՔ ՊԸԾՁԲ-01/01 ծածկագրով պարզեցված գնման ընթացակարգին:

1.2 Որպես մասնակցության հայտի ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ "Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների":

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունները («Գնումների մասին» ՀՀ օրենքի 29 հոդվածի 2-րդ մաս) չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4Բանկը մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և Ընկերության կողմից գնման ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Բանկի կողմից մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է "ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ" ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև գնման ընթացակարգի շրջանակում կնքվելիք պայմանագրի ուժի մեջ մտնելը կամ գնման ընթացակարգում հաղթող չճանաչվելը կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Ընկերության անվանումը՝ ՊԱՀՈՒՆԻ ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, Լոռի մարզ, գ.Հաղպատ
Սպասարկող բանկի անվանումը ԱՇԻԲ Ալավերդու մ/ճ
Հ/Հ 2477903154660000
ՀՎՀՀ 06609263

տնօրեն ------------------------------ Կ.Թանդիլյան
(ստորագրություն)

գլխ. հաշվապահ ------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.